ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

««ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ չհամարակալված պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գրանցող մարմնում սահմանափակում կիրառող իրավասու մարմինների կողմից սահմանված կարգով մուտքագրված սահմանափակումը մուտքագրման պահից բացառում է դրան հակասող որևէ պետական գրանցում:»:

Հոդված 2. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) գույքի նկատմամբ իրավունքների իրականացման սահմանափակման՝ օրենքին չհակասող պայման պարունակող, գործարքների, այդ թվում՝ գույքի ձեռքբերման նախնական պայմանագրերի կնքման վերաբերյալ փաստաթղթերը, որոնք պետք է ներառեն առանձին դրույթ՝ այդ սահմանափակման պետական գրանցման հիմք հանդիսանալու և սահմանափակման բնույթի վերաբերյալ:»:

Հոդված 3. Օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետից հանել « և սույն օրենքի 71-րդ հոդվածով նախատեսված վճարի մուծման անդորրագիրը» բառերը:

Հոդված 4. Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) չի ներկայացվել «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված չափով պետական տուրքի մուծման անդորրագիրը.»:

Հոդված 5. Օրենքի 32-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «վճարի» բառը փոխարինել «համար «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված չափով պետական տուրքի» բառերով, իսկ «սույն օրենքի 75-րդ հոդվածով» բառերը՝ «նույն օրենքի 29.1-ին հոդվածով» բառերով,

2) 3.1-ին և 3.2-րդ մասերում «սույն օրենքի 75-րդ հոդվածով» բառերը փոխարինել ««Պետական տուրքի մասին» օրենքի 29.1-ին հոդվածով» բառերով,

3) 3.3-րդ և 3.4-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել,

4) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Գույքի և դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է գրանցման մատյանից և կադաստրային գործից առանձին փաստաթղթերի քաղվածքների կամ պատճենների ձևով՝ ըստ հետևյալ տեսակների.

1) գույքի միավորի վերաբերյալ տեղեկությունների միասնական քաղվածք (այսուհետ՝ միասնական տեղեկանք),

2) գույքի միավորի կամ դրա որևէ մասի նկատմամբ գրանցված և գործող իրավունքների, իրավունքների տեսակների և սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվություն,

3) գույքի միավորի կամ դրա որևէ մասի նկատմամբ գրանցված և գործող իրավունքների գրանցման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի անվանումների ու վավերապայմանների վերաբերյալ տեղեկատվություն,

4) գույքի միավորի կամ դրա որևէ մասի նկատմամբ գրանցված և գործող իրավունքների սահմանափակումների և դրանց կիրառման համար հիմք հանդիսացած փաստաթղթի վերաբերյալ տեղեկատվություն,

5) գույքի (հողամասի) և ամրակայված գույքի ընդհանուր նկարագրի վերաբերյալ տեղեկատվություն,

6) միևնույն սուբյեկտին որևէ իրավունքով պատկանող գույքի առկայության (անկախ գույքի քանակից) վերաբերյալ տեղեկատվություն,

7) գույքի միավորի վերաբերյալ այլ տեղեկատվություն,

8) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքում առկա առանձին գույքային միավորների սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,

9) գույքի միավորի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի (գյուղատնտեսական նշանակության հողերի դեպքում՝ կադաստրային արժեքի) և դրա ամփոփ հաշվարկման վերաբերյալ ձևաթղթի տրամադրում:»,

5) 6-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Միասնական տեղեկանքում պետք է նշվեն դրա տրամադրման պահին տվյալ անշարժ գույքի միավորի նկատմամբ գրանցման մատյանում գրանցված բոլոր իրավունքները և սահմանափակումները, գույքի միավորի վերաբերյալ գրառված, ինչպես նաև կադաստրային գործում առկա այլ տեղեկությունները:»,

6) 6.1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.1. Սույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով սահմանված տեղեկատվության մեջ նշվում են՝ գույքի միավորի կամ դրա որևէ մասի նկատմամբ գրանցված և գործող բոլոր իրավունքները, իրավունքի տեսակը, սուբյեկտները, գույքի միավորի կադաստրային ծածկագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համարը, գրանցման ամսաթիվը (առկայության դեպքում), գույքի հասցեն (առկայության դեպքում), մակերեսը և բաժնեմասը (առկայության դեպքում):»,

7) լրացնել 6.2-6.7-րդ մասերով հետևյալ բովանդակությամբ.

«6.2. Սույն հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով սահմանված տեղեկատվության մեջ նշվում են՝ գույքի միավորի կամ դրա որևէ մասի նկատմամբ գրանցված և գործող իրավունքների տեսակը, դրանց գրանցման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի անվանումներն ու վավերապայմանները, գույքի միավորի կադաստրային ծածկագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համարը, գույքի հասցեն (առկայության դեպքում):

6.3. Սույն հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետով սահմանված տեղեկատվության մեջ նշվում են՝ գույքի միավորի կամ դրա որևէ մասի նկատմամբ գրանցված և գործող իրավունքների սահմանափակումների և դրանց կիրառման համար հիմք հանդիսացած փաստաթղթի վերաբերյալ տեղեկություններ, գույքի միավորի կադաստրային ծածկագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համարը և գույքի հասցեն (առկայության դեպքում):

6.4. Սույն հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետով սահմանված տեղեկատվության մեջ նշվում են՝ գույքի միավորի կադաստրային ծածկագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համարը, գույքի հասցեն (առկայության դեպքում), նպատակային և գործառնական (հողատեսքը) նշանակությունները, մակերեսը, կադաստրային արժեքը, շինության՝ մեկ քառակուսի մետր մակերեսի (ներքին չափերով) բազային արժեքը, կառուցման նյութի տեսակը (բացառությամբ ծածկերի, շվաքարանների և պարիսպների), տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը, ավարտվածության աստիճանը, միջհարկային ծածկի տեսակը, տանիքի նյութը, արտաքին հարդարումը, բարձրությունը (ներքին չափերով), հարկայնությունը, վնասվածության աստիճանը, շինության, ծածկերի, շվաքարանների և պարիսպների կառուցման տարեթիվը, ինչպես նաև առկայությունը դեպքում տեղեկատվություն ծածկերի, շվաքարանների, պարիսպների, կից օժանդակ շինությունների, ավտոտնակների վերաբերյալ,

6.5. Սույն հոդվածի 5-րդ մասի 6-րդ կետով սահմանված տեղեկատվության մեջ նշվում են՝ գրանցված և գործող բոլոր իրավունքները, իրավունքի տեսակը, գույքի

միավորի կադաստրային ծածկագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համարը և գույքի հասցեն (առկայության դեպքում):

6.6. Սույն հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետով սահմանված տեղեկատվության մեջ նշվում են գրանցմատյանի այլ բաժնինների ենթաբաժիններում չընդգրկված, սակայն գրառման ենթակա այլ տեղեկությունները: Անշարժ գույքի պետական ռեգիստրի ղեկավարի հրամանով կարող է սահմանվել գրանցամատյանի այլ բաժնինների ենթաբաժիններում գրառման ոչ ենթակա, սակայն կադաստրային գործում առկա և տրամադրման ենթակա այլ տեղեկատվությունը.

6.7. Սույն հոդվածի 5-րդ մասի 8-րդ կետով սահմանված տեղեկատվության մեջ նշվում են բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքում առկա առանձին գրանցված և գործող գույքային միավորների՝ ըստ բնակարանների համարների (առկայության դեպքում), սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ:» :

Հոդված 6. Օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասում «ծառայության մատուցման համար սույն օրենքով սահմանված չափով գումարը» բառերը փոխարինել «համար «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված չափով պետական տուրքը» բառերով, իսկ «սույն օրենքի 75-րդ հոդվածով» բառերը՝ ««Պետական տուրքի մասին» օրենքի 29.1-ին հոդվածով» բառերով:

Հոդված 7. Օրենքի 33.1-ին հոդվածի 2-րդ մասում «սույն օրենքով սահմանված համապատասխան վճարի» բառերը փոխարինել ««Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված համապատասխան չափով պետական տուրքի» բառերով:

Հոդված 8. Օրենքի 47.1-ին հոդվածի 11-րդ մասից հանել «, ինչպես նաև սույն օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2.1-ին կետերով նախատեսված պահանջները» բառերը:

Հոդված 9. Օրենքի 51-րդ հոդվածում.

1) 1-ին մասից հանել «և պահպանվում է տվյալ անշարժ գույքի միավորի համար կազմված կադաստրային գործում» բառերը,

2) 2-րդ մասից հանել չհամարակալված պարբերությունը:

Հոդված 10. Օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասում հանել «գանձապետարանում բացված համապատասխան հաշվին» բառերը, իսկ «սույն օրենքի 73-րդ հոդվածով սահմանված չափով» բառերը փոխարինել ««Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված պետական տուրքի չափով» բառերով, իսկ «սույն օրենքի 75-րդ հոդվածով» բառերը՝ «նույն օրենքի 29.1-ին հոդվածով» բառերով:

Հոդված 11. Օրենքի 72-73.1-ին և 75-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 12. Օրենքի 74-րդ հոդվածի՝

1) 1-ին մասից հանել «, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի» բառերը,

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,

3) 8-րդ մասում «սույն մասի երկրորդ և երրորդ պարբերություններով, ինչպես նաև սույն օրենքի 75-րդ հոդվածի 7-րդ մասով» բառերը փոխարինել ««Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված դեպքերի» բառերով,

4) 8-րդ մասի չհամարակալված պարբերությունները, ինչպես նաև 9-րդ, 10-րդ և 11-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել,

5) 13-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. Սույն հոդվածով սահմանված պետական գրանցումն ու տեղեկատվության տրամադրումն կարող է իրականացվել «Պետական տուրքի մասին» օրենքով

սահմանված ժամկետներում՝ համապատասխան պետական տուրքի վճարման դեպքում:»,

6) լրացնել նոր 14-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«14. Սույն հոդվածով սահմանված տեղեկատվությունից զատ այլ տեղեկատվություն ստանալու համար ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են դիմել անշարժ գույքի պետական ռեգիստր: Սույն մասով նախատեսված այլ տեղեկատվության տրամադրման կարգը, ժամկետները և բովանդակությունը սահմանում է անշարժ գույքի պետական ռեգիստրի ղեկավարը:»:

Հոդված 13. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հանրապետության նախագահ Վ. Խաչատուրյան

ՀՕ- -Ն

Երևան 2026թ.- -